ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1576

07.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՁՊՎ և արձանագրվել էին մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Սանհանգույցում զուգարանակոնքի ջրամատակարարումը չէր աշխատում, ջուրը անընդմեջ հոսում էր, իսկ դադարեցնելու համար անհրաժեշտ է օգտագործել ընդհանուր փականը:
2. Ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ տվյալ այցելության ընթացքում արձանագրվել է, որ ՁՊՎ-ում բացակայում են սպասք լվանալու պարագաները:
3. Խափանված էր ճաշասենյակի ջրի ծորակը, որի պատճառով պատից ջուր էր հոսում:
4. Բուժսենյակում բացակայում էր բարձը, բայց առկա բարձի երեսն էլ գտնվում էր կեղտոտ վիճակում: Ինչպես նաև առկա սրբիչն էր կեղտոտ:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Անհրաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել ներկայացված փաստերի հիմքերը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄՏՐՈ № 4148
09 09 15

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝

5995
09 09 15

Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3246 <<29>> 09 2015թ.

07.09.2015թ. թիվ 2621/1576 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ընթացքում արձանագրված թերություններն քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Սյունիքի մարզային վարչությունում:

ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ներկայացվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

1. Սանհանգույցում զուգարանի ջրի կուտակման տարան կարգավորված է այնպես, որ ջուրը փոքր ինչ հոսի զուգարանակոնքից՝ տհաճ հոտերը և հակահիգիենիկ վիճակը բացառելու նպատակով:
2. Սպասքի լվացման ժամանակ պարտադիր օգտագործվում են լվացող ու ախտահանող միջոցներ, որոնք առկա են ու պահվում են ՁՊՎ-ի պահեստային մասում:
3. Սննդի տաքացման սենյակի ջրի ծորակը արդեն իսկ փոխարինվել է նորով:
4. Ինչպես բուժսենյակում այնպես էլ բոլոր խցերում առկա են եղել բարձեր՝ բարձի երեսներով և սրբիչներ, որոնք գտնվել են մաքուր վիճակում: